Սույնով հավաստվում է, որ կցված տեքստը 2024 թվականի հունիսի 19-ին կայացած Ասիայում մշակութային ժառանգության դաշինքի Խորհրդի 2-րդ նստաշրջանի կողմից հաստատված «Ասիայում մշակութային ժառանգության դաշինքի» կանոնադրության հայերեն պաշտոնական թարգմանությունն է:

**Հայաստանի Հանրապետության**
**արտաքին գործերի նախարարություն**

## Ասիայում մշակութային ժառանգության դաշինքի կանոնադրություն

### Գլուխ I. Ընդհանուր դրույթներ

**Հոդված 1.** «Ասիայում մշակութային ժառանգության դաշինք» անվանման հապավումն է «ԱՄԺԴ»:

**Հոդված 2.** ԱՄԺԴ-ը կամավոր մասնակցության, հավասարության, փոխադարձ հարգանքի եւ փոխադարձ շահի սկզբունքների հիման վրա ասիական երկրների կողմից ստեղծված միջկառավարական կազմակերպություն է, որն ուղղված է Մշակութային ժառանգության պահպանության ասիական նախաձեռնության իրականացմանը:

**Հոդված 3.** ԱՄԺԴ-ի նպատակն է ամբողջ Ասիայում բարելավել մշակութային ժառանգության պահպանության եւ օգտագործման կարողությունները եւ համակարգել մշակութային ժառանգության երկարաժամկետ պահպանությունն ամբողջ Ասիայում՝ տնտեսության, հասարակության, մշակույթի, զբոսաշրջության եւ շրջակա միջավայրի պահպանության զարգացմանը համընթաց, ընդլայնել միջանձնային կապերն ասիական երկրների միջեւ,

դյուրացնել ասիական քաղաքակրթությունների փոխանցումը եւ ձեւավորել Ասիայի համար ընդհանուր ապագա ունեցող համայնք:

**Հոդված 4.** ԱՄԺԴ-ն իրականացնում է հետեւյալ գործունեությունը.

1. աջակցություն համատեղ նախագծերի իրականացմանն Ասիայում մշակութային ժառանգության պահպանության եւ կառավարման ոլորտում, ներառյալ՝ հետեւյալ ոլորտները, սակայն չսահմանափակելով դրանցով՝ հնագիտություն, ժառանգության օբյեկտների պահպանություն եւ վերականգնում, միջթանգարանային փոխանակում, Համաշխարհային մշակութային ժառանգության անվանակարգում, պահպանություն եւ կառավարում, մշակութային արժեքների ապօրինի ներմուծման, արտահանման եւ դրանց նկատմամբ սեփականության իրավունքի փոխանցման կանխարգելում եւ մշակութային արժեք հանդիսացող կորած օբյեկտների վերադարձի եւ փոխհատուցման դյուրացում,

2. համաժողովների, ֆորումների եւ մշակութային ժառանգության ոլորտում այլ միջոցառումների կազմակերպում,

3. մասնագիտական վերապատրաստման եւ կարողությունների զարգացմանն ուղղված համագործակցության խթանում,

4. փոխանակման ծրագրերի եւ համագործակցության արդյունքների ներկայացում եւ տարածում:

**Գլուխ II. Անդամ պետությունները, Դիտորդ պետությունները եւ**

**Գործընկեր պետությունները**

**Հոդված 5.** Ցանկացած երկիր, որը 2021 թվականի հոկտեմբերի 27-ին հրավիրված Ասիական երկրների մշակութային ժառանգության պահպանության հարցերով երկխոսությունից առնվազն մեկ օր առաջ իր գրավոր համաձայնությունն է հայտնում ԱՄԺԴ-ի ստեղծման վերաբերյալ, ԱՄԺԴ-ի Հիմնադիր անդամ պետություն է: ԱՄԺԴ-ի Հիմնադիր անդամ պետությունները համատեղ կազմում են ԱՄԺԴ-ի Կանոնադրությունը եւ կատարում են ԱՄԺԴ-ի Կանոնադրությամբ սահմանված պարտավորությունները:

**Հոդված 6.** Բոլոր ասիական երկրները կարող են դիմել ԱՄԺԴ-ին անդամակցելու համար: Դիմումատու երկրի մշակութային ժառանգության ոլորտի իրավասու մարմինը ԱՄԺԴ-ի Քարտուղարությանը ներկայացնում է պաշտոնական գրավոր դիմում: Դիմումատու երկրին պաշտոնապես տրվում է անդամ պետության կարգավիճակ, եթե դիմումը ներկայացնելուց հետո մեկ ամսվա ընթացքում Խորհրդի՝ ձայնի իրավունք ունեցող անդամների երկու երրորդը չի ներկայացնում գրավոր առարկություն:

Դիմումատու երկիրն իր գրավոր դիմումում համաձայնում է ընդունել ԱՄԺԴ-ի Կանոնադրությամբ սահմանված բոլոր դրույթները:

**Հոդված 7.** ԱՄԺԴ-ին անդամակցելու համար դիմումատու երկիրը՝

1. ապացուցում է իր հետաքրքրությունը ԱՄԺԴ-ին անդամակցելու առնչությամբ եւ ԱՄԺԴ է ներկայացնում գրավոր դիմում,

2. ճանաչում եւ ընդունում է ԱՄԺԴ-ի Կանոնադրությունը,

3. պարտավորվում է կատարել անդամ պետությանը ներկայացվող պայմանները եւ ակտիվորեն մասնակցում է ԱՄԺԴ-ի միջոցառումներին:

**Հոդված 8.** Անդամ պետությունն ունի հետեւյալ իրավունքները.

1. մասնակցում է ԱՄԺԴ-ի կողմից կազմակերպվող բոլոր միջոցառումներին եւ համաժողովներին,

2. ԱՄԺԴ-ի անունից կազմակերպում եւ նախաձեռնում է միջոցառումներ, որոնք ենթակա են Խորհրդի հաստատմանը,

3. կիսում եւ օգտագործում է ԱՄԺԴ-ի ռեսուրսները սույն կանոնադրությանը եւ հարակից համաձայնագրերին համապատասխան:

**Հոդված 9.** Անդամ պետությունը կատարում է հետեւյալ պայմանները.

1. պահպանում է սույն կանոնադրության պահանջները եւ հարակից նորմերն ու կանոնները եւ կատարում է ԱՄԺԴ-ի կայացրած որոշումները,

2. պաշտպանում է ԱՄԺԴ-ի շահերը եւ օրինական իրավունքները,

3. նախաձեռնում է ԱՄԺԴ-ի միջոցառումների կազմակերպումը, մասնակցում է դրանց եւ նպաստում դրա ամրապնդմանը եւ զարգացմանը,

4. աշխատում է ԱՄԺԴ-ի՝ համաշխարհային տեսանելիության մեծացման ուղղությամբ.

5. նշանակում է մասնագիտացված մարմին՝ ընթացիկ գործունեության իրականացմանն աջակցելու նպատակով Քարտուղարության հետ հաղորդակցությունն ապահովելու համար:

**Հոդված 10.** ԱՄԺԴ-ը որպես Դիտորդ պետություն կարող է ընդունել ցանկացած ասիական երկիր կամ որպես Գործընկեր պետություն՝ ոչ ասիական երկիր, որը որպես այդպիսին իրավունք ունի մասնակցելու ԱՄԺԴ-ի միջոցառումներին: Դիմումատու երկրի մշակութային ժառանգության ոլորտի իրավասու մարմինը ԱՄԺԴ-ի Քարտուղարությանը ներկայացնում է պաշտոնական գրավոր դիմում: Դիտորդ պետության կամ Գործընկեր պետության կարգավիճակը ճանաչվում է, եթե դիմումը ներկայացնելուց հետո մեկ ամսվա ընթացքում Խորհրդի՝ ձայնի իրավունք ունեցող անդամների երկու երրորդը չի ներկայացնում գրավոր առարկություն: Դիտորդ պետությունը կամ Գործընկեր պետությունն ունի հետեւյալ իրավունքները.

1. մասնակցելու Ընդհանուր ժողովին եւ քննարկելու ԱՄԺԴ-ի մարմինների իրավասությունների շրջանակում գտնվող խնդիրները, սակայն առանց ձայնի իրավունքի,

2. մասնակցելու ԱՄԺԴ-ի միջոցառումներին կամ ԱՄԺԴ-ի հետ համատեղ կազմակերպելու այդ միջոցառումները,

3. ունենալու հասանելիություն ԱՄԺԴ-ի բոլոր մարմինների կողմից կազմված փաստաթղթերին եւ կայացված որոշումներին:

**Հոդված 11.** Դիտորդ պետությունները կամ Գործընկեր պետությունները չեն ներգրավվում ԱՄԺԴ-ի փաստաթղթերի մշակման եւ ստորագրման գործընթացին: Նրանք նաեւ չեն ներգրավվում ԱՄԺԴ-ի մարմինների որոշումների կայացմանը եւ համապատասխանաբար պատասխանատվության չեն ենթարկվում այդ որոշումների համար: Դիտորդ պետություններն իրավունք չունեն դիմելու ԱՄԺԴ-ի ռեսուրսներից օգտվելու համար:

## Գլուխ III. Ընդհանուր ժողովը

**Հոդված 12.** Ընդհանուր ժողովը յուրաքանչյուր երկու տարին մեկ հրավիրում է հերթական նիստ, որին մասնակցում են անդամ պետությունների ներկայացուցիչները: Բացառիկ հանգամանքներում Ընդհանուր ժողովը կարող է հանդիպում հրավիրել հեռակոնֆերանսի կամ տեսակոնֆերանսի ձեւով:

**Հոդված 13.** Ընդհանուր ժողովի գործառույթներն են՝

1. քննարկել սույն կանոնադրության շրջանակում գտնվող խնդիրները կամ հարցերը,

2. ուսումնասիրել Խորհրդի աշխատանքների մասին հաշվետվությունները եւ ընդունել ԱՄԺԴ-ի աշխատանքային պլանները,

3. ընտրել Խորհրդի անդամներին:

**Հոդված 14.** Յուրաքանչյուր անդամ պետություն Ընդհանուր ժողովում ունի միայն մեկ ձայն:

**Հոդված 15.** Անդամ պետության առաջարկությամբ եւ Խորհրդի հաստատմամբ Ընդհանուր ժողովը ԱՄԺԴ-ում էական ներդրում կատարած հաստատությանը կամ անձին կարող է շնորհել պատվավոր կարգավիճակ եւ տալ պատվոգիր:

## Գլուխ IV. Խորհուրդը, Գիտական կոմիտեն եւ Քարտուղարությունը

**Հոդված 16.** ԱՄԺԴ-ը բաղկացած է Խորհրդից, Գիտական կոմիտեից եւ Քարտուղարությունից:

**Հոդված 17.** Խորհուրդն ուսումնասիրում եւ սահմանում է ԱՄԺԴ երկարաժամկետ քաղաքականությունները, աշխատանքային պլանները եւ ֆինանսական սխեմաները:

**Հոդված 18.** Խորհուրդը պետք է ունենա մինչեւ տասնվեց (16) անդամ՝ մեկ անդամ՝ յուրաքանչյուր անդամ պետությունից, այդ թվում՝ մեկ (1) անդամ՝ որպես Խորհրդի նախագահ: Խորհուրդը նաեւ ներառում է ձայնի իրավունքով մեկ (1) անդամ՝ որպես Մշակութային ժառանգության պահպանության ասիական հիմնադրամի տնօրեն, ձայնի իրավունք չունեցող երեք (3) անդամ, այդ թվում՝ Գլխավոր քարտուղար, Գիտական կոմիտեի նախագահ եւ մեկ (1) ներկայացուցիչ՝ Միավորված ազգերի կրթության, գիտության եւ մշակույթի կազմակերպությունից (ՅՈՒՆԵՍԿՕ):

**Հոդված 19.** Խորհրդի գործառույթներն են՝

1. ընտրել նախագահ.

2. նշանակել Գլխավոր քարտուղար.

3. հաստատել անդամ պետությունների, Դիտորդ պետությունների եւ Գործընկեր պետությունների կարգավիճակը.

4. սահմանել Գիտական կոմիտեի կազմը.

5. ընդունել եւ վերանայել սույն կանոնադրությունը.

6. ուսումնասիրել եւ հաստատել ԱՄԺԴ-ի ռազմավարությունները, գործողությունների ծրագրերը եւ համատեղ ծրագրերի ցանկերը.

7. ուսումնասիրել եւ հաստատել ԱՄԺԴ-ի բյուջեն.

8. վերահսկել ԱՄԺԴ-ի միջոցների օգտագործումը եւ ԱՄԺԴ-ի ծրագրերի եւ նախագծերի իրականացումը.

9. ուսումնասիրել Ընդհանուր ժողովի եւ Խորհրդի ընդունած որոշումների կատարումը.

10. եթե մշակութային ժառանգության ոլորտում գործող խոշոր մասնավոր

հաստատությունն արդյունավետ եւ արժեքավոր միջոցներ է ձեռնարկում ասիական մշակութային ժառանգության պաշտպանության համար, ապա այդ գործունեությունը խրախուսելու եւ աջակցելու նպատակով ԱՄԺԴ-ն անդամ պետություններից մեկի խնդրանքով կարող է փոխկապակցված անդամի կարգավիճակ շնորհել այդ հաստատություններին: Այդ անդամակցությունը պատվավոր է, եւ այդ անդամները ձայնի իրավունք չունեն եւ որպես ԱՄԺԴ-ի փոխկապակցված անդամ կարող են օգտագործել միայն տարբերանշանը եւ անվանումը.

11. որոշումներ կայացնել այլ կարեւոր հարցերի վերաբերյալ:

**Հոդված 20.** Խորհուրդը հանդիպում է տարին մեկ անգամ: Բացառիկ հանգամանքներում Խորհուրդը կարող է հանդիպում հրավիրել հեռակոնֆերանսի կամ տեսակոնֆերանսի ձեւով:

**Հոդված 21.** Խորհուրդը հարցերը քննարկում է այնպիսի եղանակով, որը համակցում է կոնսենսուսով որոշումների կայացումը ձայնի իրավունք ունեցող անդամների մեծամասնությամբ որոշումների կայացման հետ, այսինքն՝ գործադրում է հնարավոր առավելագույն ջանքեր՝ կոնսենսուսի հասնելու համար:

Եթե չի հաջողվում ապահովել կոնսենսուս, Խորհրդի՝ ձայնի իրավունք ունեցող անդամների առնվազն երկու երրորդի կողմից կարող է ներկայացվել քվեարկություն անցկացնելու միջնորդություն: Այս դեպքում Խորհուրդը կարող է քվեարկել: Ընդունվում է այն որոշումը, որին կողմ է քվեարկում խորհրդի ներկա գտնվող եւ ձայնի իրավունք ունեցող անդամների առնվազն երկու երրորդը:

**Հոդված 22.** Խորհուրդն ունի մեկ նախագահ: ԱՄԺԴ-ի զարգացման անհրաժեշտությամբ պայմանավորված՝ նախագահի առաջարկով կարող են ընտրվել փոխնախագահներ: Նախագահն ընտրվում է չորս տարի ժամկետով եւ կարող է վերընտրվել մեկ անգամ:

**Հոդված 23.** ԱՄԺԴ-ի կայուն գործունեությունն իր սկզբնական փուլում ապահովելու նպատակով Խորհրդի առաջին նախագահությունը ստանձնում է Չինաստանը՝ որպես Նախաձեռնող պետություն: Նախագահն ընտրվում է քվեարկությամբ՝ Խորհրդի ստեղծմանը հաջորդող երրորդ տարվանից: Խորհրդի բոլոր անդամները կարող են ունենալ նախագահ ընտրվելու իրավունք, որն ընտրվում է չորս տարին մեկ անգամ:

**Հոդված 24.** Նախագահի գործառույթներն են՝

1. հրավիրել եւ նախագահել Ընդհանուր ժողովի եւ Խորհրդի նիստերը,

2. ԱՄԺԴ-ի անունից աշխատել շահագրգիռ կողմերի հետ,

3. աջակցել ԱՄԺԴ-ի համապատասխան աշխատանքներին եւ ակտիվ դեր խաղալ հրապարակայնության, համագործակցության եւ դրամահավաքի կազմակերպման աշխատանքներում:

**Հոդված 25.** Խորհրդի անդամն ընտրվում է չորս տարի ժամկետով եւ կարող է վերընտրվել առավելագույնը մեկ անգամ: ԱՄԺԴ-ի հիմնադիր անդամ պետություններն ինքնաբերաբար դառնում են Խորհրդի անդամներ: Խորհրդի անդամների կեսը վերընտրվում է Խորհրդի ստեղծմանը հաջորդող երրորդ տարվանից: Խորհուրդը սահմանում է առաջին ընտրության եղանակը: Այնուհետեւ Խորհրդի անդամների ընտրությունը տեղի է ունենում յուրաքանչյուր չորս տարին մեկ:

**Հոդված 26.** Քարտուղարությունը կատարում է վարչական, կառավարման, կապի եւ համակարգման պարտականություններ: Վերջինիս գործառույթներն են՝

1. ապահովել ԱՄԺԴ-ի ընթացիկ գործունեությունը եւ կառավարումը,

2. քննել անդամ պետությունների, Դիտորդ պետությունների կամ Գործընկեր պետությունների կարգավիճակ ստանալու գրավոր դիմումները,

3. Խորհուրդ ներկայացնել ԱՄԺԴ-ի ռազմավարությունները, գործողությունների ծրագրերն ու համատեղ նախագծերի ցանկը եւ Գիտական կոմիտեի մեկնաբանությունները,

4. իրականացնել Խորհրդի որոշումները,

5. կազմակերպել ԱՄԺԴ-ի միջոցառումները,

6. կառավարել եւ կատարել տարեկան աշխատանքային պլանները եւ ֆինանսական բյուջեներն ու հաշվարկները,

7. անհրաժեշտության դեպքում դիմել Խորհուրդ՝ Խորհրդի միջանկյալ նիստ կազմակերպելու համար. իրականացնել հանրայնացման եւ ռեսուրսների մոբիլիզացման աշխատանքներ,

8. պատրաստել Ընդհանուր ժողովի եւ Խորհրդի որոշումների, փաստաթղթերի նախագծեր եւ նիստերի արձանագրություններ,

9. կատարել Խորհրդի կողմից հանձնարարված կամ լիազորված այլ աշխատանքներ:

**Հոդված 27.** Գլխավոր քարտուղարը պաշտոնավարում է չորս տարի ժամկետով եւ կարող է վերընտրվել: Գլխավոր քարտուղարի գործառույթներն են՝

1. ղեկավարել եւ ստուգել Քարտուղարության աշխատանքը,

2. ստորագրել կարեւոր փաստաթղթեր եւ ԱՄԺԴ-ի անունից մասնակցել կարեւոր միջոցառումներին,

3. աջակցել Քարտուղարության աշխատանքին եւ ակտիվ դեր խաղալ հրապարակայնության, համագործակցության եւ դրամահավաքի աշխատանքներում:

**Հոդված 28.** Գլխավոր գործադիր քարտուղարը նշանակվում է այն անդամ պետության կողմից, որտեղ գտնվում է Քարտուղարությունը, եւ իրականացնում է հետեւյալ գործառույթները.

1. ղեկավարում է Քարտուղարության ընթացիկ գործունեությունը, իրականացնում է Ընդհանուր ժողովի եւ Խորհրդի որոշումները եւ վերահսկում աշխատանքների ընթացքը,

2. նախապատրաստում է Խորհրդի հանդիպումները եւ Ընդհանուր ժողովի նիստերը,

3. նախագահում է ԱՄԺԴ-ի՝ Խորհրդի հանդիպումներից եւ Ընդհանուր ժողովի նիստերից բացի այլ հանդիպումներ:

**Հոդված 29.** ԱՄԺԴ-ի անդամ պետությունները կարող են իրենց ներկայացուցիչներին առաջարկել միանալ Քարտուղարությանը, ընդ որում, հարակից ծախսերը նրանք իրենց վրա են վերցնում: Քարտուղարությունը տեղակայվում է Չինաստանի մշակութային ժառանգության ակադեմիայում, որն ապահովում է անհրաժեշտ անձնակազմ եւ աշխատավայր:

**Հոդված 30.** ԱՄԺԴ-ն ունի Գիտական կոմիտե: Խորհրդի որոշումների համաձայն՝ Գիտական կոմիտեն ներկայացնում է առաջարկություններ ԱՄԺԴ-ի զարգացման ռազմավարություններից եւ գիտական գնահատումներից բխող բոլոր մասնագիտական խնդիրների վերաբերյալ: Գիտական կոմիտեի կողմից ներկայացված մասնագիտական առաջարկությունները Քարտուղարության միջոցով ներկայացվում են Խորհուրդ՝ ուսումնասիրության:

Գիտական կոմիտեն պետք է ունենա առնվազն ինը (9) եւ առավելագույնը տասնհինգ (15) անդամ: Գիտական կոմիտեի անդամներին առաջարկում են Խորհրդի անդամները, եւ նրանց նշանակում է Խորհուրդը չորս տարի ժամկետով՝ մեկ անգամ վերանշանակվելու իրավունքով: Գիտական կոմիտեն պետք է ունենա մեկ նախագահ, որն ընտրվում է չորս տարի ժամկետով եւ կարող է վերընտրվել մեկ անգամ:

Անհրաժեշտության դեպքում Գիտական կոմիտեի անդամները կարող են մասնակցել դրա հանդիպումներին տեսակոնֆերանսի ձեւով, էլեկտրոնային փոստի կամ հաղորդակցության այլ միջոցներով:

## Գլուխ V. Ֆինանսավորման աղբյուրներ

**Հոդված 31.** ԱՄԺԴ-ի ֆինանսավորման աղբյուրներն են՝

1. անդամ պետությունների կողմից կատարվող կամավոր ներդրումները,

2. Մշակութային ժառանգության պահպանության ասիական հիմնադրամի կողմից տրամադրվող ֆինանսական աջակցությունը,

3. անդամ պետությունների հաստատությունների կամ անհատների կողմից կատարվող ներդրումները,

4. այլ աղբյուրներ:

**Հոդված 32.** Չինաստանի մշակութային ժառանգության պահպանության հիմնադրամի կողմից Ասիայում մշակութային ժառանգության պահպանությամբ հետաքրքրված այլ հաստատությունների հետ համատեղ ստեղծված Մշակութային ժառանգության պահպանության ասիական հիմնադրամն աջակցում է ԱՄԺԴ-ի աշխատանքներին:

**Հոդված 33.** ԱՄԺԴ-ի ֆինանսական միջոցները պետք է օգտագործվեն սույն կանոնադրությամբ սահմանված գործունեության շրջանակում եւ ԱՄԺԴ-ի զարգացման նպատակներով:

**Հոդված 34.** ԱՄԺԴ-ի անդամ պետություններն ունեն իրենց պետությունների կողմից ներդրված ֆինանսական միջոցների օգտագործման առաջնահերթության իրավունք:

## Գլուխ 10. Լրացուցիչ դրույթներ

**Հոդված 35.** Սույն կանոնադրությունն ընդունվում է ԱՄԺԴ-ի հիմնադիր ժողովի կոնսենսուսով 2023 թվականի ապրիլի 24-ին եւ ուժի մեջ է մտնում անմիջապես դրանից հետո:

**Հոդված 36.** ԱՄԺԴ-ի որոշումներն առաջնային են դրա անդամ պետությունների գործողությունների նկատմամբ: ԱՄԺԴ-ի աշխատանքային լեզուներն են չինարենը եւ անգլերենը:

**Հոդված 37.** ԱՄԺԴ-ի ցանկացած անդամ պետություն կարող է հրաժարվել իր անդամակցությունից՝ հաջորդ Ընդհանուր ժողովը հրավիրելուց առնվազն 6 ամիս առաջ այդ մասին ներկայացնելով գրավոր հայտարարություն:

**Հոդված 38.** Սույն կանոնադրությունը մեկնաբանելու իրավունքը վերապահվում է Քարտուղարությանը, սույն կանոնադրությունը վերանայելու իրավունքը վերապահվում է Խորհրդին, եւ սույն կանոնադրությունն ընդունելու իրավունքը վերապահվում է Ընդհանուր ժողովին: